

## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

### Մարզպետարանի կողմից համայնքներում իրականացված վարչական և ֆինանսական վերահսկողության արդյունքների մասին /2011 թվականի առաջին կիսամյակ/

Համաձայն ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2011 թվականի փետրվարի 14-ի թիվ 20 հրամանով հաստատված «Կոտայքի մարզի համայնքներում 2011 թվականի վարչական և ֆինանսական հսկողություն իրականացնելու մասին» աշխատանքային ծրագրի և ՀՀ Կոտայքի մարզպետի 2011 թվականի մարտի 1-ի N19 կարգադրության՝ 2011 թվականի առաջին կիսամյակում մարզի 13 համայնքների ղեկավարների աշխատակազմերում նախատեսվել և իրականացվել է վարչական և ֆինանսական հսկողություն՝ 2008-2011 թթ. գործունեության նկատմամբ:

Աշխատանքային ծրագրի համաձայն հսկողություն է իրականացվել մարզի Հրազդան, Չարենցավան, Ծաղկաձոր քաղաքային և Ֆանտան, Կարենիս, Կաթնաղբյուր, Ձորաղբյուր, Ջրառատ, Նոր Երզնկա, Զովք, Հանքավան, Վերին Պտղնի և Գեղաղիր գյուղական համայնքներում:

Հսկողությունն իրականացվել է՝ համայնքների ավագանիների գործունեության, համայնքների ղեկավարների աշխատակազմերի գործավարության կազմակերպման, անձնական գործերի, համայնքային ծառայության, ՏԻՄ նստավայրի աշխատանքային պայմանների, կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առևտրի և ծառայությունների, պաշտպանության, քաղ. պաշտպանության, գյուղատնտեսության, համայնքի տարածքի բարեկարգման, կանաչապատման, գերեզմանների պահպանության, բյուջետային կամ ֆինանսատնտեսական գործունեության, քաղաքաշինության, հողաշինության և հողօգտագործման բնագավառներում:

**Ուսումնասիրությունների ժամանակ արձանագրվել են հետևյալ հիմնական դիտարկումները, թերություններն ու խախտումները.**

*Համայնքների ավագանու և համայնքների ղեկավարների գործունեության, համայնքների ղեկավարների աշխատակազմերի գործունեության և գործավարության բնագավառներում*

Ավագանիների և համայնքների ղեկավարների որոշումներում դեռևս հանդիպում են դեպքեր, որտեղ չեն պահպանվել օրենսդրական տեխնիկայի կանոնները՝ խախտելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-45-րդ հոդվածների պահանջները:

Դեռևս կան դեպքեր /ոչ բոլոր համայնքներում/, երբ խախտվում է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 8-րդ կետի պահանջը՝ ավագանու որոշումների առաքումը մարզպետարան յոթնօրյա ժամկետում:



Խախտվում է նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի երկրորդ պարբերության պահանջը՝ «... Ավագանու նիստերը անցկացվում են ոչ պակաս, քան երկու ամիսը մեկ անգամ: Ավագանին կարող է անցկացնել արտահերթ նիստեր»:

Ավագանու կանոնակարգով սահմանված չեն ավագանու նիստերի գումարման օրերը: Ավագանիների 2008-2010 թթ. որոշումներում չկան նշումներ իրավական ակտերի բնույթի մասին, որը հակասում է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջին: Ավագանու նորմատիվ բնույթ ունեցող ոչ բոլոր որոշումներն են սահմանված կարգով ուղարկվել ՀՀ արդարադատության նախարարություն, չեն կատարվել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի պահանջները: Չեն կատարվել նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջները:

Թերություններով են կատարվել ՀՀ Կառավարության «Գործավարության կարգը հաստատելու մասին» 20.06.2002թ. N 890-Ն որոշման 5-րդ կետի պահանջները՝ մոտից և ելից փաստաթղթերի հաշվառման մատյանների վարման առումով: Համայնքների ղեկավարների աշխատակազմերում դեռևս լիովին կարգավորված չէ արխիվային գործը: Չեն կատարվել «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքի 7-րդ, 8-րդ, 19-րդ հոդվածների և ՀՀ Կառավարության «Գործավարության կարգը հաստատելու մասին» 20.06.2002թ. N 890-Ն որոշման 83-րդ, 84-րդ, 86-րդ, 87-րդ կետերի պահանջները:

Համայնքների ղեկավարների աշխատակազմերում իրավական ակտերի հաշվառման մատյանների վարվումը չի համապատասխանում ՀՀ կառավարության՝ 11 հուլիսի 2002թ. N 1146-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներին:

Ավագանու նիստերին ներկայացած և քվեարկությանը մասնակցած ավագանու անդամների հաշվառման մատյանները վարվել են թերություններով:

Թերություններով են մշակվել ավագանու նիստերի օրակարգի նախագծերը («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 12): Աշխատակազմերի քարտուղարների կողմից համայնքի ավագանու որոշումների, համայնքի ղեկավարի որոշումների և կարգադրությունների նախագծեր չեն նախապատրաստվել՝ խախտելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը:

Նիստերի օրակարգի նախագծերը և դրանցում ընդգրկված հարցերի նախագծերն ու համապատասխան փաստաթղթերը նիստերից 7 օր առաջ, սահմանված կարգով, չեն տրամադրվել ավագանու անդամներին («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք հոդված 12, մաս 3):

Ստուգվող ժամանակաշրջանում գումարված բոլոր նիստերի օրակարգերի նախագծերի ձևավորումը (ներկայացումը) կատարվել է միայն համայնքների ղեկավարների կողմից («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդված 1-ին մաս):